



4G LTE



uFi

օգտագործողի ուղեցույց : user guide



# Սարքի մասին

uFi բաժանորդային տերմինալն իրենից ներկայացնում է շարժական 4G անլար երթուղիչ, որն ապահովում է Wi-Fi կապի հնարավորություն ունեցող բոլոր սարքերի հեշտ հասանելիությունը 4G ցանցին:

## 1.1 Լրակազմ



uFi




USB մալուխ




Օգտագործողի  
ձեռնարկ

## 1.2 Ընդհանուր սխեմա



## 1.3 Նկարագրություն



1.Միացման կոճակ  
2.WPS կոճակ

3.Լույսի ցուցիչներ  
4.Micro USB միակցիչ

Կոճակ

Նկարագրություն

Միացման  
կոճակ

Սարքը միացնելու/անջատելու համար 3 վայրկյան սեղմած պահել միացման կոճակը:

Կարճ սեղմման դեպքում միանում կան անջատվում են (եթե սարքը միացված է) լույսի ցուցիչները:

Սարքը վերագործարկելու համար 10 վայրկյան սեղմած պահել միացման կոճակը:

**WPS  
կոճակ**

Սարքի վրա WPS ռեժիմն ակտիվացնելու համար 3 վայրկյան սեղնած պահել WPS կոճակը մինչև միանա Wi-Fi ցանցի լույսի ցուցիչը:

Կարճ սեղմման դեպքում ակտիվանում կամ ապասկտիվանում է սարքի էներգախնայման ռեժիմը:

**Կարգավորումների  
վերականգնում**


Սարքի գործարանային կարգավորումները վերականգնելու համար միաժամանակ 3 վայրկյան սեղնած պահել միացման և WPS կոճակները:


## 1.4 Լույսի ցուցիչներ



 Բջջային ցանց

 SMS հաղորդագրություն

 Անլար (Wi-Fi) ցանց

 Մարտկոց

Անվանում	Կարգավիճակ	Նկարագրություն
<b>Բջջային ցանց</b>	Կառվող կապույտ լույս	Գրանցված է 2G/3G/4G ցանցում և միացված է ինտերնետին: Կատարվում է տվյալների փոխանցում:



<p><b>Անլար (Wi-Fi) ցանց</b></p>	<p>Վառվող կապույտ լույս</p>	<p>Միացված է Wi-Fi ցանցին:</p>
<p><b>SMS հաղորդա- գրություն</b></p>	<p>Վառվող կապույտ լույս</p>	<p>Ստացվել է նոր SMS հաղորդագրություն:</p>
	<p>Թարթող կապույտ լույս</p>	<p>SMS հաղորդագրությունների համար նախատեսված հիշողությունը լցված է:</p>
<p><b>Մարտկոց</b></p>	<p>Վառվող կարմիր լույս</p>	<p>Մարտկոցը լիցքաթափված է:</p>
	<p>Դանդաղ թարթող կապույտ լույս</p>	<p>Սարքը միացված է և աշխատում է:</p>

<b>Մարտկոց</b>	Արագ թարթող կապույտ լույս	Սարքը լիցքավորվում է:
	Վառվող կապույտ լույս	Սարքն անբողջությամբ լիցքավորված է:


## Էներգախնայման ռեժիմ

- Երեսուն (30) վայրկյանի ընթացքում սարքի վրա որևէ կոճակ չսեղմելու դեպքում սարքի բոլոր լույսերի ցուցիչներն ինքնաբերաբար կանջատվեն՝ բացի մարտկոցի ցուցչից:
- Ցուցիչները միանում են սարքի լիցքավորվելու կամ սարքի վրա որևէ կոճակ սեղմելու դեպքում:

- Տաս (10) րոպեի ընթացքում Wi-Fi ցանցի միջոցով տվյալների փոխանցում չիրականացնելու դեպքում սարքն ինքնաբերաբար անջատվում է ինտերնետից:
- Ինտերնետին միացումն ինքնաբերաբար վերականգնվում է սարքի վրա որևէ կոճակ սեղմելու կամ ինտերնետին միացված որևէ սարքից տվյալների փոխանցման հարցում ստանալու դեպքում:
- Երեսուն (30) րոպեի ընթացքում Wi-Fi ցանցի միջոցով տվյալների փոխանցում չիրականացնելու դեպքում լույսի բոլոր ցուցիչները և Wi-Fi կապն անջատվում են: Wi-Fi ցանցին միանալու համար սեղմել որևէ կոճակ սարքի վրա:



## 1.5 Սարքի գործարկումը

**Քայլ 1.** Բացել սարքի հետևի կափարիչը: Դրա համար պետք է մատնաթմբիկները դնել սարքի իրանի եզրամասում զետեղված հատուկ ելուստի վրա և, թեթևակի ուժ գործադրելով, կափարիչն առանձնացնել իրանից:




**Քայլ 2.** Micro-SIM ձևաչափի SIM քարտը տեղադրել դրա համար նախատեսված հատուկ բնիկում:

**Ուշադրություն.** SIM քարտը չտեղադրել բնիկում՝ առանց այն նախապես բացելու: Բնիկի բացման ձևը ցույց է տրված կափարիչի ներսի կողմում փակցված կպչուն պիտակի վրա:




**Քայլ 3.** Տեղադրել մարտկոցը համապատասխան խցիկում:



**Քայլ 4.** Որևէ տեղ գրել կամ հիշել կափարիչի ներսի կողմում փակցված կաշուն պիտակի վրա նշված Wi-Fi ցանցի անվանումը (SSID) և գաղտնաբառը (եթե սահմանված է):

**Քայլ 5.** Փակել հետևի կափարիչը:



## 1.6 Wi-Fi ցանցին միացումը

Wi-Fi ցանցի անվանումը (SSID) և գաղտնաբառը նշված են կափարիչի ներսի կողմում փակցված կպչուն պիտակի վրա: Դրանք կարելի է գտնել նաև մարտկոցի տակ փակցված պիտակի վրա:

**1.** Հանոգվել, որ երթուղիչը միացված է հոսանքի աղբյուրին:

**2.** Որոնել հասանելի անլար ցանցերն այն սարքի վրա, որը պետք է միացնել երթուղիչին:

**3.** Հասանելի անլար ցանցերի ցանկում փնտրել և գտնել անհրաժեշտ ցանցի անվանումը (SSID):

**4.** Անլար ցանցին միանալու համար գաղտնաբառ սահմանված լինելու դեպքում պետք է մուտքագրել գաղտնաբառը:

**5.** Երթուղիչին բարեհաջող միանալուց հետո կարելի է մուտք գործել ինտերնետ:

**Ուշադրություն.** անվտանգության մկատառումներով խորհուրդ է տրվում ցանցին առաջին իսկ միացման դեպքում փոխել ցանցի գաղտնաբառը (կամ սահմանել գաղտնաբառ, եթե սահմանված չէ):



## 2. Աշխատանքի մեկնարկը

1. Բացել երթուղիչին միացված սարքի զննիչը (browser):
2. Հասցեի տողում մուտքագրել մարտկոցի տակ փակցված պիտակի վրա նշված հասցեն:
3. Կարգաբերման էջում մուտքագրել մուտքի գաղտնաբառը:  
Գաղտնաբառը նշված է մարտկոցի տակ փակցված պիտակի վրա:

**Ուշադրություն.** անվտանգության նկատառումներով խորհուրդ է տրվում ցանցին առաջին իսկ միացման դեպքում փոխել գաղտնաբառը:

## 3. Լիցքավորում

Սարքը հնարավոր է լիցքավորել երկու եղանակով:

## **Ցանցային փոխարկչի միջոցով լիցքավորում**

USB մալուխով սարքը միացնել ցանցային փոխարկչին: Սարքը լիցքավորելու համար փոխարկիչը միացնել հոսանքի աղբյուրին: Անջատված վիճակում լիցքավորվող սարքի ամբողջական լիցքավորումը տևում է առավելագույնը 3 ժամ:

## **USB մալուխի միջոցով լիցքավորում**

Սարքը հնարավոր է լիցքավորել նաև USB մալուխի միջոցով այն համակարգչին միացնելով:  
Անջատված վիճակում լիցքավորվող սարքի ամբողջական լիցքավորումը տևում է առավելագույնը 4 ժամ:

**Ուշադրություն.** մարտկոցը չվնասելու համար սարքը հնարավորինս շուտ լիցքավորման դնել այն պահից, երբ սկսում է թարթել մարտկոցի լիցքավորվածության ցածր մակարդակի ցուցիչը:







# Overview

uFi is a portable wireless router, providing a simple way to share 4G with any Wi-Fi embedded device.


## 1.1 Package contents



## 1.2 Application



## 1.3 Device overview



1.Power key

2.WPS key

3.LED light

4.Charging/Micro USB Jack

Use the device's 2 buttons as follows:

Button	Description
Power key	Press and hold for 3 seconds to turn the device on/off.
	Short press to put the LED in either active or sleep mode.
	Press and hold for 10 seconds to reboot the device
WPS	Press and hold the WPS button for 3 seconds until the Wi-Fi LED blinks.
	Short press to put the device into either active or sleep mode.



## Reset

Press both "Power" and "WPS" keys at the same time for 3 seconds to reset your device to factory mode.

## 1.4 LED display



-  Network Indicator (red or blue LED)
-  Wi-Fi indicator (blue LED)
-  SMS indicator (blue LED)
-  Battery indicator (red or blue LED)

## LED description:

Icon	Icon display
<b>Network indicator</b>	LED is blue when connected to the Internet or flashes when the Internet is disconnected. LED is red when there's no network, service, or SIM card.
<b>Wi-Fi indicator</b>	LED is blue when Wi-Fi is active.
<b>SMS indicator</b>	LED is blue when you have a new message or flashes when your inbox is full.
<b>Battery indicator</b>	LED is red when the battery is low. A blue, slowly flashing LED indicates that the device is working. A blue, quickly flashing LED indicates that the device is charging. A blue, non-flashing LED indicates that the device is fully charged.


## Power saving mode:

- If no key is pressed on the device for 30 seconds, then all the LED lights will automatically turn off except the battery LED light. An LED light will come on when the USB cable is used to charge the device or any key is pressed on the device.
- If there is no Wi-Fi access used on the device for 10 mins, Internet network dialling will disconnect automatically and will connect automatically once any key is pressed on the device or Wi-Fi is accessed from the device.
- If there is no Wi-Fi access to the device for 30 minutes, then all LED lights will be automatically turned off along with the Wi-Fi AP function. Press any key to restore the Wi-Fi AP function.

## 1.5 Installing the device


**Step 2:** Install SIM card in the card slot.

**WARNING!** Do not insert the micro SIM card to the slot before opening the slot cover. Follow the mark on the slot to open and lock.




**Step 2:** Install SIM card and SD card in the cards slot.


**WARNING!** Do not insert the micro SIM/SD card to the slot before opening the slot cover. Follow the mark on the slot to open and lock.



**Step 3:** Install battery.



**Step 4:** Close the back cover.



## 1.5 Connecting in Wi-Fi mode

The Wi-Fi name (SSID) and Wi-Fi key are located on the sticker on the rear of the back cover. They also can be found on the label under the battery.

**Step 1:** Use the Wi-Fi manager on your Wi-Fi embedded device to select Wi-Fi name (SSID).

- From a Windows PC: Right-click Wireless network connection on the task bar, and select: View Available Networks.
- From a Mac computer: Select System Preferences -> Network -> Airport. Click "Advanced" to choose an SSID from the list of available networks.

- From an iOS device: Settings -> Wi-Fi. Choose an SSID from the available networks.
- From an Android device: Settings -> Wireless controls -> Wi-Fi settings. Choose an SSID from the available networks.

**Step 2:** Enter the Wi-Fi key when prompted for a security key.

## 2. Quick Setup

Launch the Internet browser and enter the address written on the label under the battery. Enter the password to log into the uFi configuration page.

**Default login password can be found on the label under the battery.**

Log in and click “Settings” to configure the basic settings.



## Wi-Fi Settings:

- SSID: Set the Wi-Fi name of this device.
- Security: Configure the security mode for Wi-Fi connection.

## 3. Charging the device

You have two ways to charge your device.

### **Charging with an adapter**

Connect a USB cable between the device and the head of the adapter and plug it into a power socket to start charging.

When the device is powered off, it takes a maximum of 3 hours before being fully charged.

## Charging via USB

You can also charge the device by connecting it to a PC with the USB cable.

When the device is powered off, it will take a maximum of 4 hours to finish charging.

**Note:** In order to protect the battery, when the low power LED indicator flashes, charge the device as soon as possible.



